

պի եկեղեցականաց նիւթական ապահովութեան խնդրի լուծումն։ Մենք վերել յիշեցինք, որ գորա համար հարկաւոր է չափաւորել և նոցա թիւը համեմատ ժողովրդոց թուին։ Հաւանական է, որ ծխոց հաւասարութեան վերայիշեալ կարգադրութեան պիտի հետեւի և իւրաքանչիւր եկեղեցւոյ եկեղեցականաց թուի որոշումն համեմատ նոյն եկեղեցւոյ ծխականաց թուին։ հաշուելով գէթ 150—200 տուն ծուխ իւրաքանչիւր քահանայի համար։ Բայց այդ շտատի իրագործումն կարող է տեղի ունենալ միայն ժամանակի ընթացքում քահանայից թուի բնական ընթացքով նուազելովն։ Այս գէպքումն էլ թէ նոյն տեղական իշխանութիւնք և թէ ժողովրդականք անպայման հնազանդութեամբ պարտական են աջակից լինիլ Բարձրագոյն Հոգեոր Խիսանութեան, իւրաքանչիւր արտաքոյ շտատի եղող հանգուցեալ քահանայի փոխարէն նորին չառաջարկելով ձեռնադրութեան համար։ Այս միջոցների ճիշդ գործադրութեամբ, տարակոյս չկայ, որ յընթացս գէթ տամնեակ տարիների կանոնաւորութիւն, հաւասարութիւն և նիւթական ապահովութիւն կտիրեն հայ եկեղեցական դասի վիճակի մէջ քաղաքներում։

## Ա. ԷՋՄԻԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

« Լուծմունք արդարուց » ձեռագիրը հեղինակութիւն է Սիմէօն վարդապետի Երեանցւոյ (ապա կաթողիկոս)։ — Սա ունի երկու յիշատակարան։ Մինն Յօվհաննէս բարեջան վարդապետին, որ աշակերտ է հեղինակին և որ արտագրել է 1770ին։ Իսկ երկրորդը Խաչակի Խպիսկոպոս Գեղամացունն է, որ այդ գիրքը ստացել է Դուկաս կաթողիկոսից նուէր, իբրև իւր ուսուցչի հեղինակութիւն և իւր աշակերտական արտագրածը։

Առաջին յիշատակարանի քաղուածքն է։

« Գոնէ ի բազմաժամանակեայ աշխատութիւնս իմ խնայել աղաչեմ, որ ի ՌՃՂԲ թուականին մերոյ սկսեալ, ի չորս ամս բոլոր հաղիւ կարացք աւարտել զսա և պյն ևս մեծաւ տառապանօք և անդրելեաւ վշտակրութեամբ, յայսր և անդր տարագիր և աստանդական լինելով վասն դառնաշունչ բերմանց ամանակին, զորոց թէպէտ ի յառաջարանութեան մերում խոստացաք ճառել ի վերջ բանիցս։ սակայն այժմ գրիչն իմ կայ առեալ մնաց խափան ի բազում ժամս, քանզի մնալով ի յափշութեան և

ի վարանս, ոչ գիտացի թէ զորն գրեցից և զորն թողից։ Քանզի վասն իմոց ծովացելոց մեղաց թէ ի մարմնական պետութիւնսն և թէ ի հոգեորական պետութիւնսն ի ժամանակս այս գոյր անպատմելի և անդրելի խոռվութիւնը և մարտք, Կարճառօտ այսքան իմասչիք, զի ի ներքանեաց ամացսութն շահ փոխեցան մին զմիւն սպանանելով և զտեղին յաջորդելով։ Մատենական թէ ո՞րքան իցէ լեալ վնասքն ի հեծելազօրաց սոցա և երկիրն ո՞րպէս իցէ ոտնակոփ լեալ հանդերձ գերեվարութեամբ, թո՛ղ զսրամաշ և սովամահ լեալսն. իսկ զփախստեայսն ո՞թուեսցէ, Գրեթէ երկիրն Պարսից և Այրարատեան ամայի եղև. Իսկ ի հոգեորս ներկայիս, կաթողիկիոսն, որ էր Նազար Ճահկեցին, ընդ միաբանից սրբոյն Աթոռոյն վէճունակ լեալ, նաև միաբանիքն միաբանեալ ընդ Կ. Պօլսոյ պատրիարքին և այլոց առաջնորդաց ի յայնը վայր եղելոց, ընդ Նազարու մարտեան բանիւ և թղթով յամն երկուս և թէ ո՞րքան վրդովմոնք եղեն ի յազգու մեր և ո՞րքան անուանաբեկութիւն եղև վարդապետաց և վանականաց, ոչ է գրելի և թէ ո՞ւմ էր մեղն, Աստուած գիտէ. Զայսքանս վասն այսորիկ զրեցի. զի գիտասչիք, թէ յորպիսում յամանակոջ և ո՞րպիսեաւ տաժանմամբ յաւարու հասուցի, քանզի զայս ամենայն մոռացեալ (որ և ես իսկ կայի ի միջի) միայն հոգ և ջան իմ այս էր, զի զառ ի կատար հասուցից ի յօդուտ եղբարց իմոց, Ուրեմն ի սիրազուն յեղբարցդ իմոց պարապողաց յընթերցախութիւնս, զի և դուք մի ձանձրանայցէք յիշել յալօթս ձեր (ի յօդտիլն ձեր ի սմանէ) զշարահիւսողս սորին զիմէօն վարդապետս (Երևանցի) նաև զհոգեոր ծնողն և զվարժապետն իմ զԾամախեցի Յակոր նրբամիա և գիտնական վարդապետն, որ ինարդեանս իբրև զնոր իմն արեգակն փայլի գիտութեամբ և հանձնարով ի սուրբ յերկնանման յԱթոռոջս ի մէջ վարդապետաց, նաև զմարմնաւոր ծնողն իմ զկարապետն և զԳայիհանէն և զեղբայրսն իմ զՄելքիսեթէկն, զՅարութիւնն և զՊաղարն, զորս ի յիշելն ձեր, յիշեցեալք լինիչիք և դուք ի Քրիստոսէ Աստուծոյ. . . . Արդ եղև զրաւ մատենիս որ կոչի Լուծմունք Արտաքնոց ի ՌՃՂԶ յամսեան օգոստոսի 10, ի դրան Սրբոյ Էջմիածնի, ի Հայրապետութեան Տեառն Նազարու Ճահկեցւոյ կաթողիկոսին և ի պատրիարքութեան սրբոյ Երուսաղեմայ Տեառն Գրիգորի վարդապետին և Կ. Պօլսոյ Տեառն Յակոբայ Աստուածարան վարդապետին. ողջ լերուք ի Տէր».

### ԵՐԿՐՈՐԴ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ.

Որպէս ի սկզբան անդ ի դրան դրոցս գրեցաք, զգեղեցիկ լուծմունքս արտաքնոց զրեաց վասն իւր՝ օրհնածին որդին արարողին լուծմանց՝ գերեքանիկ և երանելի Հայրապետին Սիմէօնի՝ և աշակերտակիցն մեր՝ Յովհաննէս բարեջան վարդապետան. Իսկ մինչ աւարտեաց զգրութիւնս սորին, փոխեցաւ առ Քրիստոս յայսն մեր ամենեցուն ի ՌՄՒԽ թուոջ մերում, և յամսեանն յուլիսի, և մնաց գիրքս այս առանց սրբազրութեան և կաղմելց, մինչև ցվախճանումն հոգելոյս ծնողին մերոյ նոյն երիցս երանեալ

սրբազնն Կաթողիկոսին Սիմեոնի։ Որոյ փոխումն առ Քրիստոս՝ եղեւ ի ՌՄԻԹ Շուռջ մերում, և ի յուլիսի 19։ Խակ ապա՝ մինչ յաջորդեաց զԱթոռ Հայրապետութեան ընտրութեամբ և հրաւիրմամբ հոգւոյն սրբոյ երջանկաղաքու և Սրբազնն Կաթուղիկոսն 8։ Լուկաս. (որում տացէ Տէր զերկարութիւնս կենաց՝ խաղաղութեամբ և անդորրութեամբ) ինդրիցի ի նորին աստուածարեալ սրբազնութենէն՝ շնորհել ինձ զգիլքս զայս։ Որ և լուռւ աղերսանացս և շնորհեաց ինձ, որում վարձահատուց նղիցի Տէր՝ յերկակի կեանս իւր։ Զի յիրաւի լցոց զերկոսին փափագս և զտենչանս սրտի իմոյ, Որոց առաջինն էր այս զի որովհետեւ զիրքս այս իմ լուսահո գի ծնողի և երախտաւորի շարադրեալն է, փափաքէի ունիլ, և զմակթարութիւն նորին ի սմանէ առնուլ վայելելով զսա. զի զիւր ձեռագիր հեղինակն ոչ կամեցայ ունիլ լնդ իս, այլ մեալ ի գրատանն Սրբոյ Աթոռոյս արձան. զի անկորուստ կացցէ ընդ այլ ևս նորին ձեռագիր հեղինակ դրեանցն, այսինքն՝ Քարոզ գրքովն, Պրօկղին և Յօմարին, Վասն որոյ, զայս՝ որ անմիջապէս ի ձեռագիր հեղինակէն էր օրինակեցեալ, բաղձանք ինդրիցի և ստացայ, Երկրորդ՝ զի գրով սորին լուսահոգի Յովհաննէս վարդագետն, ի մանկութենէ եղբայր իմ էր, հոգեկից և սիրակից, յետոյ եղեւ ընդ իս ծառայակից՝ ի ծառայութեան նցյն երջանիկ Հայրապետին Սիմեոնի, նաև աշակերտակից իմ և համշիրակ, զի ի միասին առնուաք դրասս արապէին գրեանց, և սրբոյն Դիոնէսիոսի գրոցն և այլոց, ի նոյն սրբազնն ծնողէն մերմէ։ Եւ զի նա առ Աստուած փոխեցաւ ցանկացայ ունիլ առ իս զվաստակս ձեռաց նորին զսոյն գիրքս իմաստավի. և միկթարիլ սովու իրրեւ նոյն հարազատ և սիրակից քաղցր եղբօր բան. որ առ Տէր գնաց, և միշտ յիշել զնաւ.

Զոր ի դասս սրբոց վարդապետացն դասեցէ Քրիստոս՝ յաւուր մեծի գալստեան իւրոյ, շնորհելով զմողութիւն մարդկորէն սիալանացն։ Արդ՝ ուրեմն որք յետ մեր վայելիցէք զսա յիշենջիք ի մարրափայլ աղօթու ձեր զեղինակս սացին՝ զհոգելոյս ծնողն մեր հոգեւոր, զՏէր Սիմեոն երջանկափայլ Կաթուղիկոսն. Ընդ նմին յիշենջիք և զնորոգ հայրապետն մեր Աստուածընտիր, զՏէր Ղուկաս Կաթուղիկոսն որ շնորհեաց ինձ զսոյն գիրքս. Ապա յիշենջիք զաշխատողն ի վերայ սորին և օրինակողն՝ զնոյն յիշեալ համշիրակ եղբայրն իմ, զհոգելոյս Յովհաննէս վարդապետն, հանդերձ երկակի ծնողաք իւրովք և ամենայն ննջեցելովք. Հուսկ յետոյ՝ և զիս զյեանեալս յամենայնի ի ծնունդս լուսածին մօրս մերոյ Սրբոյ Աթոռոյս եջմիածնի, զնուաստ և զմեղսամած Խսահակ Եպիսկոպոս Գեղամացի, զաշկերտ հեղինակին գրոցս, և զեղբայրակիցս օրինակողի սորին, որ ևղեւ սմա ստացող, և ծաղկեցուցի, կազմել ետու, և սրբագրեցի, ի վայելս իմոյ նուաստութեան, և իմայնոց հարազատից՝ որոց և գեկ լիցի զկնի անցման իմոյ. Զոր վայելելով ուրեմն՝ անմոռանալի յիշմամբ յիշենջիք զանարժանս բարեց յիշատակի, և զերկակի ծնողն իմ, և զամենայն ննջեցեալս և կենդանիս մեր. Եւ բուք յիշեալ լինիջիք յանձառ ողորմութիւնս և ի

գթութիւնս Ցեառն Աստուծոյ յամենայն ժամ աստ և յանանց կեան. ալն ամէն:

Ա 1872 ձեռագրի յիշատակարանն է. Ամենազօր շնորհիւն և ուղորմութեամբն Աստուծոյ յանկ եղեալ աւարտեցաւ գիրս Պրոկլի Պլատօնական իմաստասիրի յամի փրկութեան մերոյ՝ ՌՀՀԲ. և ի մերում թուականութեանս ՌՄԴԱ. ի Քրիստոսահիմն Ամոռոս Ս. Էջմիածին. ի գերիշխանական Հայրապետութեան Ցեառն Սիմեոնի գերերջանիկ և սրբազն Կաթոլիկոսի ամենայն Հայոց Նրեանցեւոյ. գթաշատ և բազմերախտ Ցեառն իմոյ և օրհնածին ծնողի ի վայելս նուաստ անձինս Յովս սէփայ անարդիւն վարդապետի Սանահնեցւոյ՝ յազգէ Արդութեան: Որ ի տղայութեանս հասակէ՝ սպասաւորելով սրբազն վեհապետին՝ ընկալայ ի նմանէ զյուղի խնամն և զերախտիս և ըստ իմում չափու զշնորհս: Որ և արժանացցոյ ևս զանարժանութիւնս իմ շնորհաց քահանայութեան, վարդապետութեան, և եպիսկոպոսութեան, որում Ցէր կեանս երկարս Խաղաղութեամբ տայէ: Որ յառաջին ամէ Հայրապետութեան իւրոյ մինչեցայժմ, որ ահա տասներորդ ամ է Հայրապետութեան իւրոյ, ոչ դադարեցաւ ի շինութեանց և յօգտաւոր գործոց: Զի պարսպեաց զՍուրբ Ամոռոս, զտանիս եկեղեցւոյն և զսեղանատունն նորոգեաց: Թրաղանիսն, զքարվանսարայն, զմոմատունն, զնոր դպրատունն, զգոմնն անասնոց նորապէս շինեցցոյ: Հաստատեաց և զտպազրատուն ի Սուրբ Ամոռոջս: Զգեօնն հեռացուցեալ ի պարսպէն, եկեղեցեան հանդերձ նոր շինեցցոյ: Բազմացցոյ վասն Սրբոյ Աթոռոյս զսպիհս: գիւղօրայս: զեստաահարս: զբրնձահանս: մեծացցոյ զվերի պյգին: Զեղվարդ, Աշտարակ, Մօղնի և Աղունատուն գիւղորսյսն՝ որը մուլք էին լեալ Սրբոյ Աթոռոյս ի վաղ ժամանակի, և տաճիկք յափշտակեալ էին: Զանի: մեծաւ առեալ ի նոցունց յետու: սեփհականեաց Սրբոյ Աթոռոյս: Եւ զՅօշական գիւղն: յորում տաճիկք բնակեալ զհյան վարեալ էին ի բաց, այժմ՝ հանեալ զնոսսա անտի, արար հայրանակ: Զհաշտրախան և զբոլոր երկիրն Ռուսաց՝ որք ի Դանձասարցիսն էին յարեալ, և զինքնազլուին առաջնորդ հաստատեալ, դարձաց առ Ս. Աթոռոս, և տէրունի արար: Արար և զնարս տէրունի: Եւ բազում աշխատութիւնս կրեաց յաղազս երկճղեցեալ կաթուղիկոսութեան տանն Աղունից, և մանաւանդ սակս աղթարմայից զորս և կրէ տակաւին: Եւ զպյլ բազում գործս արժանիս յիշատակի արար, և առնէ տակաւին: որում Ցէր լիցի վարձահատաց:

Ա'րգ՝ էր ի սղյն ժամանակս պատերազմ մեծագոյն ի մէջ երկուց հզօր թագաւորութեանցն Օսմանցւոյ և Ռուսաց: որ է տակաւին յոյժ սաստկագյն: Յորոց պատճառէ վրդովեցեալ է աշխարհ ամենայն, մանաւանդ իւղձալի ազգն մեր յամենայն ուրեք են ի մէջ մեծաց վշատաց և նեղութեանց, որք նեղին և կեղեքին ի նեղաց, ի բռնացելոց և ի սրիկայից: յաւար առողաց և ի գերողաց և յայլ պյաղիսեաց: Եւ յաղազս այսոցիկ՝ սրբա-

զան Վեհափառն մեր և մեք ամենեքեան կամք ի մէջ մեծաց հոգոց և տրտմութեանց, ցաւելով վասն խղճալի ազգիս մերը՝ և օդութեան Տեառն սպասելով: Որ և նոյն ինքն ողորմածն Աստուած, այց արասցէ խղճալի աղդիս մերոյ, և ամենայն աշխարհաց պարգևեսցէ՝ զիսաղաղութիւն իւր սուրբ: Եւ արդ՝ ի զրաւ սակաւուկ պատմաբանութեանս, մեծաւ պաղատանօք հայցիմ ի սիրելի հարցոյ և եղբարցց իմոց, զի վայելելն չեր զգիրս իմաստասիրական, ընթեռնլով՝ կամ օրինակելով, յիշեսջիք ի մաքրափայլ աղօթուձեր զրազմերախտ տէրն իմ և զշնորհածին ծնողն զՄիմէօն գերերջանիկ և որբազան Կաթուղիկոսն: Եւ զըստ մարմնոյ ծնողսն իմ, զհանգուցեալն ի Քրիստոս, զհայրն իմ Շիօց բէկն, և զմայրն իմ Քէթէվան, և զեղբայրսն իմ զպարոն Մովսէսն, և զպ. Քէժանն, և զքորսն իմ Խուսուդանն և զՄարիամն: Եւ զրաբերողբոլ որդիս և դստերս նոցին, և զպլ ամենայն արեանառու մերձաւորս և ազգայինս իմ: յիշեսջիք նաև զհամայն Հոգեորեղարան իմ: որբ աշակերտակիցք են ինձ և համշիրակք և օրհնածին որդիք Սրբազան Վեհիս մերոյ, այսինքն զՄկրտչ եպիսկոպոս քաղցրաբարւոյ եղբայրն իմ, նաև զհամաշունչ և հոգեկից եղբայրն իմ Խստհակ շնորհապերճ վարդապետն, և զպլ ամենայն աշակերտակիցն իմ, զհարազատ որդիսն Սրբազան Վեհին: Եիշեսջիք ապա և զիմ անարժանութիւնս զԹովսէփ նուաստ Եպիսկոպոս, որ ստացայ զցանկալի զիրքս Պրոկոլի իմաստնոյ՝ արդեամբք իմով, գրեցուցանելով զսա քաջավարժ քարտուղարին գահոյս սրբոյ և մեծի Մատթէոս խոհեմաշատ վարդապետին, եղբօրն իմոյ սիրեցելոյ: Քայց աղաջեմ զսիրելի հարսդ և եղբարսդ իմ, զի մի օտարացուցանիցէք ի Սրբոյ Աթոռոյս հզմիածնէ զգիրքս զայս, հանելով ի սմանէ արտաքս: Քան զի յետ վճարման կենաց իմոց, անջնջիք յիշատակ ետուզսա ի դուռն սրբոյ և մեծի Աթոռոյս, հանդերձ ամենայն զրեամբք իմովք: Զի զամենայնն շնորհօք և արդեամբք սորին եմ ստացեալ: ուստի չկամիմ զի ստարացին ի սմանէ: Վասնորոյ աղաչեմ զհանդիպողսդ ամենեսեան, լսել իմոյ աղերսանացս, որբ եմէ լսելով յիրաւի կատարեսջիք զինդիրս իմ, Քրիստոս Աստուածն մեր լուիցէ Խնդրուածաց ձերոց, և կատարեսցէ, և վարձուց բարեաց զձեզ զամենեսեան արժանացուցէ՝ այժմ և յօրն յափենից, ամէն:

Վերջին չորս յիշատակարանների մէջ յիշուած դառն քաղաքական հանգամանքները վերաբերում են Պարսկաստանի պատմութեան այն ժամանակին, երբ Նազր Նահի մաշից յետու, ծագեցան յընթացո 15 տարիների անընդհատ սկատերազմների, թէ նորա յաջորդների և թէ օտար բռնաւորների մէջ և Պարսկաստանը տակն ու վրայ արին: Արիւնհեղութեանց, աւարառութեանց, գերեվարութեանց վրայ աւելացաւ և սովն, որ ոչ պտկաս վիհաս պատճառեց երկրին քան պատերազմը: Այս սո-

վը ժամանակակից պատմաբան Խաչատրուր վարդապետը համեմատումէ պատմիչ Յովհաննէս Կաթողիկոսի նկարագրած սովի հետ և նրանից էլ աւելի սասաիկ է համարում, իսկ այս ժամանակի քաղաքական վիճակի մասին ասումէ. « այր զարամբ ելանէր, յափշտակել զգահն Պարսից » : Այս կարճ ժամանակամիջոցում, այն է 1747—1762, Պարսկաստանում իրանց շահ Հրատարակում են Նադր Շահի թոռը Շահուուս, նորա եղբօրորդիք Ատէլ, Իբրահիմ, Շահ Սուլէյման երկրորդ, Ալիմերդէն խան, Հասան խան Ղաջար, Քերիմ խան և Ազատ խան, որոց բոլորի մահից յետոյ Քերիմ խանը 1762—1778 տիրանումէ Պարսկաստանին, ուստի և № 1382 ձեռագրի յիշատակարանն առումէ, գրեցաւ գիրքս ի ՌՄՁԵ թ. (1766) ի թագաւորութեան Պարսից Քերիմ-խանի:

Յիշատակարանի միւս բովանդակութիւնք վերաբերում են Երջանկայիշատակ Սիմէօն Կաթողիկոսի գործողութեանց յօդուտ բարեկարգութեան Սուրբ Աթոռոյս և նորա ջանից ընդգարձակելու Ս. Էջմիածնի հայրապետի իշխանութիւնը զանազան վիճակների վերայ, բազմացնելու Աթոռի կալուածները, նոյնպէս և նորա գրաւոր վաստակին ու աշխատանաց՝ Աթոռը գիտութեամբ ճոխացնելու:

№ 1872 ձեռագրի յիշատակարանը բացի Սիմէօն Կաթողիկոսի գործողութեանց բովանդակումէ տեղեկութիւնք և հանգուցեալ Արդութեանց Յովսէփ Կաթողիկոսի մասին կենսագրական նկատողութիւնք, որոնցից երեսումէ որ նա աշակերտած է Սիմէօն կաթողիկոսին և նրանից ստացել է ուսման հետ և վարդապետութիւն և եպիսկոպոսութիւն: Յիշւում են յիշատակարանում և Յովսէփի կաթողիկոսի ազգականաց և աշակերտակից ընկերների անուններն, որոնք նշանաւոր եկեղեցականք եղան ապագայում: